

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
sushovh@mail.ru, susannahovhannisyan@litinst.sci.am

ORCID iD: 0000-0001-8718-6079

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-68

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՂԱՆԻՇՆԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ (ԱՐԱՐԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ, ԱՆԻ)

Բանալի բառեր - Ավետիք Իսահակյան, Անի, Էջմիածին, Արա-
րատ, ինքնություն, ազգային խորհրդանիշ:

Ամփոփում

Հոդվածի նպատակն է ազգային ինքնության խորհրդանիշներից երեքի բացահայտումը Ավետիք Իսահակյանի գրական, գեղարվեստա-կան ժառանգության մեջ: Ուսումնասիրության խնդիրն է քննել Իսահակ-յանի՝ տարբեր ժանրերի՝ գեղարվեստական, հրապարակախոսական, քննադատական երկերում և նամականիում «Արարատ», «Էջմիածին» և «Անի» հասկացությունները՝ որպես հայ ազգային խորհրդանիշներ: Հոդ-վածում առաջին անգամ բացահայտվում է ընդհանուր ծագման կամ էթ-նիկ պատկանելության հիմքով ձևավորված ազգային կարևորագույն խորհրդանիշների իսահակյանական ընկալումը, որը և պայմանավորում է ուսումնասիրության նորույթը: Իսահակյանը խորհրդանիշները ներկա-յացնում է որպես ազգային ինքնագիտակցության դրսևորումներ և ընդգ-ծում է նրանց ճանաչելիության նշանակությունը: Այս ելակետից էլ բա-նաստեղծը հաճախ է իր, հերոսների կամ հեղինակային խոսքի միջոցով անդրադառնում մայրենի լեզվին, հայոց գետերին, լեռներին և այլն, եր-բեմն էլ դառնում խորհրդանիշաստեղծ (Արագած, Անի և այլն): Հոդվա-ծում անդրադարձ է կատարվում միայն Արարատի, Էջմիածնի և Անիի նշանակությամբ հայկական մշակութային արժեքների համատեքստում: Իսահակյանի պատկերացումներում Արարատ բիբլիական լեռը հայ ազ-գի պատմության մշտամնա վկան է, երկնք ուղղված բնության հրաշք, որն ունի կարոտի ու հավերժության, միաժամանակ վրեժի և պահանջա-

տիրության խորհուրդ: Էջմիածինը պոետի ընալումներում հայի հոգևորության և ազգային գիտակցության, նրա՝ քրիստոնեական քաղաքականության արմատներում լինելու և ազգի գոյության ու հարատևման խորհրդանիշն է, իսկ Հայոց Բագրատունիների մայրաքաղաք Անիի մեջ բանաստեղծը տեսնում էր հայկական պետականության խորհուրդը: Այս երեքի քննությունը ամբողջացնում և բացահայտում է ազգի հոգևոր նկարագրի, պետականության և ազգի հավերժության եռամիասնությունը: Իսահակյանի պատկերացումներում խորհրդանիշների կարևորումը բխում է հենց այդ եռամիասնության պահպանման համար մշտական հոգածության ու պայքարի անհրաժեշտության ելակետից: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ազգային ու համակարգային հարաբերակցության, ազգային ինքնության և ինքնագիտակցության նկատմամբ ներկայումս գիտական մեծ հետաքրքրությամբ և արդի համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) զարգացումներով, ազգերի ինքնության առջև ծառացած մարտահրավերներով:

SUSANNA HOVHANNISYAN

Doctor of Philology, Associate Professor

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

sushovh@mail.ru, susannahovhannisyan@litinst.sci.am

ORCID iD: 0000-0001-8718-6079

THE SYMBOLS OF NATIONAL IDENTITY IN THE PERCEPTION OF AVETIK ISAHAKYAN (ARARAT, ETCHMIADZIN, ANI)

Keywords: Avetik Isahakyan, Ani, Etchmiadzin, Ararat, identity, national symbol.

Abstract

The purpose of the article is to explore three symbols of national identity within the literary and artistic heritage of Avetik Isahakyan. The research focuses on analyzing the concepts of “Ararat,” “Etchmiadzin,” and “Ani” as national symbols across the diverse genres of Isahakyan’s works — literary, journalistic, critical, and in his correspondence. For the first time,

the article reveals Isahakyan's perception of the most significant national symbols, formed based on shared origins or ethnic belonging, which underscores the study's novelty. Isahakyan presents these symbols as expressions of national self-awareness and emphasizes their recognizable significance. From this perspective, the poet frequently references the native language, Armenia's mountains and rivers, and other imagery through his characters or authorial voice, sometimes becoming a creator of symbols (Aragats, Ani, etc.). The article examines the significance of only Ararat, Etchmiadzin, and Ani within the context of Armenian cultural values. In Isahakyan's perception, the biblical Mount Ararat is an eternal witness to the history of the Armenian people, a natural wonder reaching toward the heavens, embodying the symbolism of longing and eternity, as well as the simultaneous pursuit of retribution and justice. In the poet's view, Etchmiadzin represents the spirituality of Armenians and their national self-awareness, rootedness in Christian civilization, and the existence and continuity of the nation. In turn, Ani, the capital of the Armenian Bagratids, is seen by the poet as a symbol of Armenian statehood. The exploration of these three elements completes and reveals the triune essence of the nation's spiritual identity, statehood, and the eternity of the people. In Isahakyan's understanding, the emphasis on the importance of these symbols stems from the need for constant care and struggle to preserve this triunity. The relevance of the study is driven by significant scholarly interest in the interplay between the national and the universal, national identity and self-awareness, as well as contemporary processes of globalization and the challenges facing national identities.

СУСАННА ОВАНЕСЯН

Доктор филологических наук, доцент

Институт литературы им. М. Абегамяна НАН РА

sushovh@mail.ru, susannahovhannisyan@litinst.sci.am

ORCID iD: 0000-0001-8718-6079

СИМВОЛЫ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ВОСПРИЯТИИ АВЕТИКА ИСААКЯНА (АРАРАТ, ЭЧМИАДЗИН, АНИ)

Ключевые слова: Аветик Исаакян, Ани, Эчмиадзин, Арарат, идентичность, национальный символ.

Аннотация

Цель статьи — раскрытие трех символов национальной идентичности в литературном и художественном наследии Аветика Исаакяна. Задача исследования заключается в анализе понятий «Арарат», «Эчмиадзин» и «Ани» как национальных символов в многообразии произведений Исаакяна различных жанров — художественных, публицистических, критических, а также в его переписке. В статье впервые раскрывается исаакяновское восприятие важнейших национальных символов, сформированных на основе общего происхождения или этнической принадлежности, что определяет новизну исследования. Исаакян представляет символы как проявления национального самосознания и подчеркивает значение их узнаваемости. С этой позиции поэт часто обращается к родному языку, горам и рекам Армении, другим образам через своих героев или авторскую речь, иногда становясь создателем символов (Арагац, Ани и др.). В статье рассматривается значение только Арарата, Эчмиадзина и Ани в контексте армянских культурных ценностей. В представлениях Исаакяна библейская гора Арарат — вечный свидетель истории армянского народа, чудо природы, устремленное к небесам, которое несет в себе символику тоски и вечности, а также одновременно стремления к возмездию и восстановлению справедливости. В восприятии поэта Эчмиадзин является символом духовности армян и их национального самосознания, укорененности в христианской цивилизации, а также существования и

преимственности нации. В свою очередь, в Ани, столице армянских Багратидов, поэт видел символ армянской государственности. Исследование этих трех элементов завершает и раскрывает триединство духовного облика нации, государственности и вечности народа. В представлениях Исаакяна подчеркивание значимости символов проистекает из необходимости постоянной заботы и борьбы за сохранение этого триединства. Актуальность исследования обусловлена большим научным интересом к соотношению национального и общечеловеческого, к национальной идентичности и самосознанию, а также современными процессами глобализации и вызовами, стоящими перед идентичностью наций.

Ներածություն

Խորհրդանիշները կամ խորհրդանշանները իրենց լավագույն դրսևորումն ունեն ազգային մշակույթի ու հատկապես գրականության մեջ: Ազգային ինքնության երկու հասկացություններից առաջինը ստացել է «խիստ» բնորոշումը: Այս եզրույթի շրջանակում ազգությունն ընկալվում է էթնիկ պատկանելության համոզմունքի վրա հիմնված: Երկրորդ «ազատ» հասկացությունը ազգությունը դիտարկում է որպես ճկուն եզրույթ՝ առանց ֆիքսված հատկությունների և խորհրդանիշների: Մաքս Վեբերի և Ուոքեր Բոնորի՝ ի թիվս այլոց առաջադրած «խիստ» սահմանումը և՛ ռեալիստական է, և՛ ունի առավելություններ: Մինչդեռ ինքնության «ազատ» սահմանումը վերաբերելի է ճշմարիտ ազգային ինքնությանը: Վերջին շրջանում ազգային ինքնության խնդիրը բազմիցս է քննության առարկա դառնում հայ գիտնականների կողմից (Հարությունյան, 2004: Աթայան, 2005: Պետրոսյան, 2022):

Ավելի հաճախ ազգն ընկալվում է մի յուրահատուկ «հավաքական մարմին», և ամեն մի նոր սերունդ շարունակում է ազգի պատմամշակութային ժառանգորդի դերը՝ իրականացնելով «հոգևոր ինքնապաշտպանության» գործառույթ (Հարությունյան, 2004: 73-74): Արդի հումանիտար որոշ գիտություններում տարածում է գտնում «ինքնության քաղաքականություն» եզրույթը: Այս համատեքստում ազգային ինքնությունը կասկածի տակ դնող ծրագրերի մաս են կազմում խորհրդանիշների աղավաղումներն ու նենգափոխումները: Սոցիոմ-

շակութային այս և այլ մարտահրավերներին դիմակայելու մասին ուշագրավ դիտարկումներ կան բազմաթիվ աշխատություններում (Лурье, 1994. Хесле, 1994. Лэйнг, 2002. Хантингтон, 2018. Рикер, 2008):

Ազգային ինքնությունը անխզելիորեն կապված է խորհրդանիշների կամ խորհրդանշանների հետ: Յուրաքանչյուր էթնիկ խումբ ստեղծում է իր խորհրդանիշները, որոնք նրան մի կողմից միավորում են որպես հանրույթ, մյուս կողմից՝ առանձնացնում այլ ազգերից:

Հայերի համար ազգային ինքնության պահպանման խորհրդանիշները շատ են՝ Արարատ լեռը, հայոց այբուբենը, միմյանց չկրկնող խաչքարերն ու խաչի պատկերով հուշարձան-կոթողները, ժողովրդական նվագարան դուդուկը, ծիրանը, նուռը, վիշապաքարերը, Քարերի սիմֆոնիան, «որդան կարմիրը» և այլն: Պետական խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, օրհներգ, ստեղծվել են Հայաստանի անկախության և պետականության կերտման ճանապարհին: Հայ մեծերից խորհրդանիշ են դարձել նրանք, ովքեր վիթխարի դերակատարություն են ունեցել հայի ինքնության ձևավորման ու պահպանման գործում, ովքեր հայի հավաքական կերպարի մարմնավորումն են: Այդպիսի անհատներից են Հայկը, Մեսրոպ Մաշտոցը, Վարդան Մամիկոնյանը, Խորենացին, Նարեկացին, Անդրանիկը, Թումանյանը, Կոմիտասը, Սարյանը, Իսահակյանը և այլք: Վ. Ջվյագինցևան Իսահակյանին էր անվանում Հայաստանի խորհրդանիշ, վրացիները՝ Թումանյանին: Նրանք բանաստեղծին բարևում էին «Привет Арапаты» ողջույնի խոսքով (Թումանյան Նվ., 2009: 52): Հովհ. Շիրազը Թումանյանին անվանել է «Մասիսն ազատված»: Վ. Բրյուսովի երկու բանաստեղծություններ վերնագրված են է «К Арапаты» և «Арапат из Этивани»: Խորհրդանիշ դառնում են ոչ միայն անհատներ, այլև երևույթներ, էպոսի, առասպելների հերոսները: Այդպիսիք են «Հայկ ու Բելի կռիվ» արտահայտությունը, Սաունցի Դավիթ, «Սարդարապատ» և այլ անուններ:

Ավետիք Իսահակյանը և հայկական խորհրդանիշները

Փիլիսոփայական և սոցիոլոգիական գիտաճյուղերի հայ մասնագետների համար էական է տաղանդի ազգային որակ ունեցող

մտածողների, մասանվորապես Խորենացու, Նարեկացու, Թուման-
յանի և Իսահակյանի աշխարհընկալման ու մոտեցումների ուսումնա-
սիրությունը: Նշված գրողները պատկերավոր լեզվով սահմանել են
նաև ինքնությանն առնչվող գիտական հասկացություններ: Այսպես,
Իսահակյանի խոսքերով «Ազգը տեղ է և ցեղ, ոճ է և ճակատագիր, լե-
զու է և զգացմունք» (Իսահակյան, 2021 ա, 762):

Իսահակյանը բազմիցս է անդրադարձել հայ ազգի ինքնության
խնդիրներին՝ դրանք քննելով XX դարասկզբի բարդ պատմական հա-
մատեքստում, երբ հայ ժողովուրդը կանգնած էր Օսմանյան կայս-
րությունում կոտորածների, աքսորի և մշակութային ցեղասպանությ-
ան ու այլ ճնշումների առջև: Բանաստեղծի երկերում միավորվում են
անհատի և ազգի ճակատագրերը, ցույց է տրվում ազգային ինքնությ-
ան խորքային կապը նրա խորհրդանիշների հետ: Ավետիք Իսահակ-
յանի օրագրերում և հուշերում, «Ուստա Կարո» վեպում, «Հիշատակա-
րանում» (1911–1912), «Հադուկի երգերում», «Մասսա Մանուկ», «Իմ
կարավանը» պոեմներում և գրական ու գեղարվեստական այլ երկե-
րում հստակ արտահայտվել են ազգային ինքնության մասին բանաս-
տեղծի պատկերացումները:

«Ուստա Կարո» վեպում հեղինակն անդրադարձել է հայ մար-
դու ինքնության արժեքաբանությանը, որն էլ գրողին հնարավորությ-
ուն է տվել քննարկելու հերոսի ընկալումները ժամանակի ու տարա-
ծության մեջ՝ անցյալ – ներկա – ապագա ժամանակաշրջայի պարու-
րածն ընթացքի շրջագծում: Վեպը ներառում է պատմական ժամա-
նակը և տարածությունը: «Ուստա Կարոն» բազմապլոտե, էպոսաբ-
նույթ երկ է, իսկ էպոսներն առանձնահատուկ դեր ունեն ազգերի
ինքնության վերհանման առումով: Վեպի հերոսը՝ Կարոն, մարմնա-
վորում է հայ էթնիկ ես-ը: Իսկ մյուս կերպարները՝ Օրթե Հարութը,
Չավուշը և այլք, լրացնում և օգնում են բացահայտելու բարոյական
արժեքները: Կարոն դիմակայում է ինքնության դեմ ուղղված մար-
տահրավերներին, դառնում առավել կենսունակ՝ որպես աշխատող,
ստեղծող, արարող «Ես»: Ուստա Կարոն իր արարչաստեղծ էությանը
էպիկական կերպար է: Վեպում խորհրդանշական է Բագարանը՝ որ-
պես հայ հեթանոս և քրիստոնյա իրականության միախլուման վայր.
այնտեղ հանդիպել են հեթանոս աստվածները, Երվանդունի և Բագ-

րատունի արքաները և այլք: «Ուստա Կարո» վեպում, ինչպես բանաստեղծի գրական ողջ ժառանգության մեջ, խորհրդանիշների առաջին շարքում *մայրենի լեզուն է*: «Ուստա Կարոյի» հերոսներից Ճարտարապետն ասում է. «*Երբ մի ժողովուրդ ընկնում է սպրկության մեջ, բայց պահում է իր լեզուն, կնշանակի բանտի բանալին իր ձեռին է...*» (Իսահակյան, 2022: 682) (Այս և հետագա ընդգծումները մերն է՝ Ս. Հ.): Իսկ Վարպետը հավելում է. «*Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի ոգին*» (Իսահակյան ա, 2021: 762): Հայոց լեզուն՝ որպես ազգային ինքնության կենտրոնական բաղադրիչ, ներկայանում է նաև «Հիշատակարան»-ում՝ օտար մշակույթների ազդեցությանը դիմակայելու համատեքստում: Այստեղ է բանաստեղծն արձանագրում «Սուտ է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզվով» (Իսահակյան ա, 2021: 762): «Հիշատակարան»-ում բանաստեղծը նկարագրում է հայ ժողովրդական բանահյուսության, երգերի և ավանդույթների գեղեցկությունը, հիշում է մանկության տարիները Գյումրիում, որտեղ ժողովրդական երգերն ու պատմությունները ձևավորում էին ազգային մտածողություն: Հենց այս գիտակցությամբ է Իսահակյանը մշակել ժողովրդական լեզենդներ, հեքիաթներ և ավանդապատումներ, որոնցում ազգային ինքնությունը կապվում է հոգևորության հետ: «Հավերժություն»-ում նա խորհում է կյանքի իմաստի և ազգի հավերժության մասին՝ զուգադրելով դրանք ժողովրդի գոյապայքարի խորքային գաղափարներին: Ըստ Իսահակյանի՝ հայ ժողովուրդը նմանվում է մի գետի, որը ձգտում է հասնել ծովին, բայց օտար ափերը փորձում են սանձել նրան, իսկ նա պարտավոր է դիմադրել, հակառակ դեպքում կկորցնի իր արմատները: Իսահակյանի համար ազգային ինքնության կորստի վտանգին դիմագրավող խորհրդանշաններից են ոչ միայն մայրենին ու մշակույթը, այլև հայոց բնաշխարհը՝ Արագածը, Ախուրյան գետը և այլն: Սակայն ազգի հավերժության և կենսունակության խորհրդանիշների մեջ Իսահակյանի պատկերացումներում առանձնանում են Արարատը, Էջմիածինն ու Անին, որոնք ամենատարողունակ գաղափարական նշաններն են, ազգին միավորող արժեքներ՝ գաղափարական խոր ենթատեքստով:

Արարատը որպես ազգային ինքնության խորհրդանիշ

Ազգային խորհրդանիշներ շատ ունենք, բայց հատկապես Արարատի (Մասիս) դերն է վիթխարի հայության «Մենքի» շարունակականության ու պաշտպանության գործում, Արարատը՝ որպես նվիրակարգության գագաթ նաև մարդկության փրկությունը խորհրդանշող Նոյյան տապանի հանգրվանն է, հետևաբար համամարդկային է: Նախքան քրիստոնեության ընդունումը Մասիսը համարվել է «աստվածների տուն» և ի սկզբանե հայ ժողովրդի սրբազան լեռն է: Արարատը զուգադրվում է ուժի, տոկունության և ազային հպարտության հետ: Այն հայրենիքի ճակատագրի, «Հայոց արնոտ աշխարհի Հոգու» խորհրդանիշն է (Եղիազարյան, 2002: 203): Մասիսը նաև հայ արվեստի կարևորագույն բաղադրիչներից է: «Արարատ» պատկերող նկարը դարձել է ոչ միայն մոտիվ, այլ մի ինքնուրույն ժանր հայ կերպարվեստում՝ իր ուղին սկսելով արտաշիսյան ժամանակաշրջանի մետաղադրամի ձևավորման տարրից (մ.թ.ա. 2 թ. – մ.թ. 1 թ. 189 - մ.թ.) մինչև վերնիսաժյան զանգվածային նկարներ¹:

Իսահակյանի ստեղծագործություններում բիբլիական լեռը ներկայացնում է նրա անհատական ընկալումներն ու ապրումները, ազգային ոգու, հայրենիքի նկատմամբ սիրո ու հպարտության նվիրական զգացումները: Բանաստեղծն Արարատի տեսարանի ներքո ապրելու հանգամանքով է պայմանավորում ազգի ինքնատիպ նկարագիրը, «ինքնահատուկ ոճը»՝ նկատելով, որ *«միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, չեն ջնջվում ո՛չ ջարդերով, ո՛չ հրով ու սրով...* Արարատի ստվերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգով ու ճարտարապետությամբ

¹ Իբրև Սրբազան լեռ՝ Արարատը դարձել է հայ և օտարազգի դասական և ժամանակակից նկարիչների ներշնչանքի առարկա, գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքների թեմա: Հայ նկարիչներից շատերը Արարատը նկարել են բազմիցս՝ ներկայացնելով որպես բնության իրական հրաշալիք և հայրենիքի խորհրդանիշ: Այս իմաստով առանձնահատուկ է Մ. Սարյանի դերը, որը ոչ միայն մի շարք «Արարատների», այլև Հայաստանի գերբի վրայի «Արարատի» հեղինակն է (1922): Սարյանի «Հայաստան» կտավում Մասիսը Արևելյան և Արևմտյան Հայաստանները միավորող խորհուրդ ունի: Արարատը հանճարեղ նկարչի վրձնի տակ վերահաստատում է հայ ժողովրդի ու Հայաստանի հավերժությունը: Հ. Բաթխուդադյանի խոսքերով Սարյանի արվեստում «Արարատը հոգնակի է», քանի որ «...պատկերում է Արարատը տարվա տարբեր եղանակներին, օրվա տարբեր ժամերին և տարբեր դիտակետերից» (Բաթխուդադյան, 2025):

յամբ պերճախոս կերպով ցույց է տալիս, որ ինքը դեմք ունի, իր ձևը ունի» (Իսահակյան ա, 2021: 762): Վարպետի գեղարվեստական երկերում Արարատը հայ ազգի *պատմության վկան* է: «Ուստա Կարո» վեպում ճարտարապետի խոսքերով ժողովուրդը Մասիսը տեսնելիս երկյուղում է, «գլուխը բռնում», քանի որ նրա ենթագիտակցության մեջ «դարերի թաքուն մտքով... այս լեռը մի մեծ գաղափար է խորհրդանշում» (Իսահակյան, 2022: 683): Ռավեննայում, ուր կայսրության ճակատագրեր են բեկվել, Իսահակյանն իր կարոտը հայրենիքի նկատմամբ արտահայտել է Արարատի պատկերով («Արարատի ծեր կատարին. // Դար է եկել, վայրկյանի պես, // Ու անցել»: Արարատի, «սեգ ճակատին» «Մահախուճապ սերունդների // Աչքն է դիպել լույս գագաթին, // Ու անցել»): Ընդ որում, Իսահակյանը, կարևորելով Արարատի խորհուրդը, կամենում էր, որ Բրյուսովի անթուլոգիայի նոր հրատարակության մեջ հենց այդ բանաստեղծությունը զետեղվի (Իսահակյան բ, 2021: 343): Վարպետի համար Մասիսի ստորոտը նզովելու ու վրիժառության երդում տալու, ողբի ու նաև փառաբանումի վայր է: Պոետը Մասիսի առջև պատասխանատու է զգում իր ազգի առջև յուրաքանչյուր ճակատագրական որոշման համար: Արագած երգող Իսահակյանն իր գրառումներում նշում է. «Հայացքս Մասիսին հառած պիտի մեռնեմ» (Իսահակյան ա, 2021: 875): Արարատին նայելը Վարպետի համար ոչ միայն կարոտի ու հավերժության, այլև *վրեժի խորհուրդ ունի*: Նա գրում է. «Հոգիս լցված է քեզնով՝ Մասիսով: Լցված է սիրով, խավարով, *գաղափարով, վրեժով*» (Իսահակյան ա, 2021: 876): Հայոց քաջերի վրեժի կանչը հասնում է Գողթան երգիչներին և ներկան ու անցյալը միավորում Մասիսի հայացքի ներքո. «Նվեր դաշնակցության տասնամյակին» քերթվածում բանաստեղծը գրում է.

Բայց երբ կտրիճի վա՛ռ սիրտը թնդաց

Սիրով, վրեժով հայրենի երկրի.

Երբ հրացանի կոչը որոտաց.

Կոչն ազատության Մասիս սարն ի վե՛ր,-

Գողթան քնարը նորից զնգզնգաց

Ու սիրտս ճախրեց Մասիս սարն ի վե՛ր» (Իսահակյան բ, 2021: 624):

Նույն բանաստեղծության մեջ Մասիսը նաև հայրենիքի խորհրդանիշ է, որի կարոտն արտահայտվում է մայր գետի ու Մասիսի հիշատակումով.

Մեր Մասիսեն, մեր Արագեն

Փափագ - պապակ կարոտ ենք (Իսահակյան բ, 2021: 627):

Իսահակյանը հայ ազգի ուժը տեսնում է Գ. Լուսավորչի և նրա կանթեղի, Սասունցի Դավթի ջրաղացի, Եղիշեի գերեզմանի ու նաև «Մասիսից բերած քարերի» մեջ (Իսահակյան ա, 2021: 767): «Ուստա Կարո» վեպում Չավուշը Կարոյին համեմատում է Մասիս սարի հետ. «Ուստա Կարո ջան, դու ինձի համար Սարը Մասիս ես»: «Հիշատակարան»-ում հեղինակը դարձյալ վրեժի մասին է խոսում. «Ես պիտի նստիմ Մասիսի ստորոտին, գլխիս մոխիր ցանեմ և լամ, լամ՝ նզովելով ամբողջ աշխարհը բարեկամ ու թշնամի, և ամեն սրտում վառելով վրեժի օժ ու թույն, – գրում է Իսահակյանը, – Ա՛խ, ես էլ լինեի քեզ հետ, իմ խեղճ, ջարդված, ճղակտոր, որբ և այրի ժողովուրդ... Աշխարհը՝ քար, մարդիկ՝ օտար, թուրքերը՝ գազան, Եվրոպան՝ շահամուլ... իսկ Հայերը՝ հավիտենական զոհեր... Եվ Աստված էլ չկա, միայն սատանան է, որ իշխում է...» (Ինճիկյան, 1977): Երբեմն Վարպետն իր ներաշխարհը նմանեցնելում է Արարատին: Նամակներից մեկում գրում է. «Իմ սիրտը նմանվում է Մասիսին, որ արտաքուստ մի խաղաղ ծերունի, խաղաղ և մեղմ... հանդարտ արտաքուստ, բայց վրդով ներքուստ» (Իսահակյան, 2020: 13): Այն, որ սուրբ լեռը նվիրական վայր էր պոետի համար, գիտեին նրա բոլոր մտերիմները: Եվգինե Թիթոյանին գրած 1904 թ. նամակում «Մասսա Մանուկ» – ի հեղինակը գրում է Արարատից ծնվող իր խոհերի, ազատության, հզորության զգացողությունների մասին. «Ահա Արարատը... և շա՛տ, շա՛տ հրաշալիքներ... նայում ես, նայում ես և չես հագնում... Սկսում ես ընկնել մտածմունքների մեջ... Մտքերի ծով, մտքերի լեռնագագաթներ... Ի՞նչ է մարդը, ի՞նչ է նրա հոգին, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ է մեռնում... Մի րոպե սիրտդ թռչում է արծվի պես, և ուխտում ես՝ լինել միշտ ազա՛տ, բա՛րձր, հզո՛ր, սո՛րբ, մենակ և քաջ, ձգտել կատարելության, իդեալի և մեռնել ադամանդյա բարձունքում, երկնքին մոտ, Աստծու ձեռքերի վերա...» (Իսահակյան, 2020: 88-89): Ուշագրավ է, որ այս խոսքերը ծնվել են Արագածի գագաթին՝ Արարատին նայելիս: Եվգինեին ուղղ-

ված նամակի այս հատվածը, թվում է, արձակ բանաստեղծություն է և ունի գեղարվեստական արժեք:

Բանաստեղծը ծրագրում էր գրել «Օրիգինալ գիրք», որի հերոսներն էին լինելու «Դավիթ, Մհեր, Վահագն, Տորք-Անգեղ, Գայլ-Վահան, Աշոտ Երկաթ, Կիլիկիայի քաջերից... Դավիթ Բեկ, Աղասի ... Աղբյուր Սերոբ, Գևորգ Չաուշ, Անդրանիկ» և հայ ազգային ազատագրական շարժման այլ նվիրյալներ (Իսահակյան, 1977: 235): Այս ծրագիրն անկատար է մնացել: Սակայն ստեղծագործական հենց այդ ծրագրի մի մաս պետք է համարել «Մասսա Մանուկ» վիպասքը (1895-98)²: Աստվածային ու առասպելական դյուցազունների ծագունաբանությունը բանաստեղծը կապում է Արարատի հետ և ազգի ինքնությունը հայտնաբերում է «Ազատն Մասիսի» ներքին ժայթքման հետ: Վիպասքի ստեղծագործական պատմությանը անդրադարձել է Ավիկ Իսահակյանը՝ Մասսա Մանուկին բնորոշելով «Սուրբ վրեժի առյուծ դառած», Դև Սուլթանին հաղթող դյուցազուն: Ազատ Մասիսն այստեղ Հայաստանի հարատևության ու անսասանության, նրա հզորության խորհրդանիշն է՝ որպես հայոց բյուր նվիրական անունների՝ Սիփանի, Նեմրութի, Առնոսի, Տավրոսի և այլ լեռների թագ ու պսակ, «մեր աշխարհի հզոր գմբեթ»: Մասիսից են սկիզբ առնում մաքառման ոգին, վրեժի շանթերը, ինքնության փրկության ուղիները: Մասիսի գագաթն է էպիկական հերոսի՝ Մանուկի տառապանքի և «երկու կաթիլ» ապառաժ հալեցնող արցունքի վայրը: Արարատի գագաթին է հնչում ռազմի շեփորը, որը գնում - գնում է հեռուներ, «մինչև էսօր», այնտեղից է հնչում Ազատ հզոր Ջանգը, այստեղ է ծածանվում Ազատության դրոշը: Հայերնիքի համար կովի ելած քաջազունը նույնանում է Մասիսի հետ. Մանուկը «Մասսա ժեռ աթոռքին կանգնած մի նոր Մասիս էր» (Իսախատյան, 2001: 104-116):

2 Իսահակյանի արխիվում պահվում է «Դև Սուլթանն ու Մասսա Մանուկը - Հայ գուսանի վիպասքը» նվեր Ավ. Մարի /Ավետիք Մալոյան / անմահ հիշատակին» վերնագրով, ավելի քան 230 էջ կազմող ընդհանուր տետրը, որի 2-րդ էջում բանաստեղծը գրել է. «Այս էպոսը սկսել եմ 1895 թ. հոկտեմբերից, բայց մի ամիս չանցած ընդհատել եմ և նորից սկսել եմ գրել 1897 թ. մայիսից և վերկացրել եմ 1898-ի հունվարի 13-ին, գրել եմ Ալեքսանդրապոլում և Ղազարապատում»: Վիպասքի առաջին տարբերակն ըստ բնագրի ունի «Դև-Սուլթանն ու Մասսա Մանուկը - Հայ գուսանի վիպասքը» խորագիրը. տե՛ս ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆ., II - 254-261:

Այսպես, Արարատը դիտելով ազգային մաքառման, վրեժի, կորցրածը վերադարձնելու խորհրդանիշ, Իսահակյանը հանգում է **հայոց պահանջատիրությանը**, որն այսօր էլ արդիական է՝ որպես «Հայրենիք - Պետություն» երկընտրանքը լուծելու ուղիղ ճանապարհ: Իսահակյանը և հայ մշակույթի շատ գործիչներ ունեին այն գիտակցությունը, որ պահանջատիրությանը կարելի է հասնել ուժեղ պետություն ունենալու դեպքում³: Հենց պետականության վերականգնման ու պահանջատիրության համատեքստում է Անին Իսահակյանի համար դառնում ազգային ինքնության կարևորագույն խորհրդանիշ:

Անին՝ որպես ազգային ինքնության խորհրդանիշ

Էթնիկական խորհրդանիշերի ստեղծումը մշտական և անդադար գործընթաց է, դարերի ընթացքում ձևավորվում են նոր էթնիկ խորհրդանիշներ՝ պայմանավորված որևէ առարկայի, երևույթի կամ անհատի պատմական դերով ու նշանակությամբ: Կարելի է ասել, որ Անին իբրև այդպիսին հայ ազգային խորհրդանիշների հարուստ ընտանիք ներմուծեց Ավ. Իսահակյանը: Անիի նկատմամբ Վարպետը առանձնահատուկ սեր ու ջերմություն էր զգում: Երբեք ոչ մի հայ բանաստեղծ այնպիսի սեր չի խոստովանել Անիին, ինչպես Իսահակյանը: Նրա նույնիսկ գրառումներն ավելին են, քան Անիին նվիրված շատ բանաստեղծություններ: «Անի մտնողը», «Անիի ավերակների քարերը» խորագրերի տակ բանաստեղծն ի մի է բերել Անիի տեղի ու դերի մասին իր պատկերացումները: Նրա մանկությունն անցել էր Անիի պարիսպների տակ: Ողջ կյանքում նայելով աշխարհի ճարտարապետական սքանչելի կոթողներին՝ Իսահակյանը նրանցում փնտրել է միայն Անին և միշտ իրեն զգացել է Անիի քաղաքացի. բանաստեղծ, ում համար Անին «քարացած ցնորք» էր, «հավերժական ներշնչարան», «մարմնացած կատարելություն», «անիրական գերաշխարհ», «քարակերտ բանաստեղծություն», «քարացած երազ» ու «քարացած հեքիաթ», «հրաշք ու հրաշալիք», «առասպել», «հայույթ»

³ Նույն մոտեցումն ուներ նաև Մ. Սարյանը, երբ Ա. Ն. Կոսիգինին՝ իբրև ուժեղ պետության ղեկավարի, առաջարկում է վերադարձնել Արարատը: Երևանում, երբ Կոսիգինը Սարյանի հյուրն էր, Վարպետը նրան նվիրում է «Արարատը ամպերի մեջ» գեղանկարը՝ ասելով՝ «- Я дарю Вам Арарат на картинке, а Вы могли бы вернуть Арарат Армении в действительности» (Սարյան, 2020: 404):

յան խորհրդանիշ՝ երկնային արևասպիտակ գմբեթով», «մեր վերածնության սֆինքսը», «մեր հնությունների, իմաստավորված քարերի վեպը», «հայ ճարտաարապետության համադրությունը», «կախարդական աշխարհ» «գեղեցիկը՝ կատարյալ, ամենակատարյալ, սահման – աստվածային, գերկատարյալ» (Իսահակյան, 2021: 785-790): Անիի մեջ բանաստեղծը տեսնում էր *հայկական պետականության* խորհուրդը, ընդ որում, ոչ միայն անցյալի, այլև ապագայի: Նա «Իմ կարավանը» պոեմում գրում է. «Անին մենք մեր ետևում չունենք, այլ միշտ մեր առաջը: Որքան տարիները հեռանում են, այնքան մենք մոտենում ենք նրան» (Իսահակյան, 2006: 48): Պետականության գաղափարը գլխավորն է, որի մասին խորհում էր Իսահակյանն ամեն անգամ Անիի ավերակների կողքին լինելիս: Նա Անին ընկալում էր որպես պետականության և ազգային մշակույթի միաձույլ ամբողջության խորհրդանիշ: Այս մոտեցումը, որով բանաստեղծն ազգի համար ռազմավարական նշանակության, ապագային միտված խորհրդանիշ էր ձևավորում, վկայում է Վարպետի մարգարեականության մասին: Նա արվեստագետի իր ներըմբռնողականությամբ զգում էր այն, ինչն այսօր արձանագրում են ոլորտի գիտնականները՝ Հայրենիքի ու պետության համատեղումը հայ ժողովրդի համար լրջագույն խնդիր է (Հարությունյան, 2005: 11):

Անին Իսահակյանի համար նաև «հայության» և հայրենիքի, նրա դարերի *պարմության խորհրդանիշն էր*: Նա Անիում է զգում բոլոր ժամանակների բոլոր հայ հայրերի ու մայրերի, բոլոր հայրական օջախների ջերմությունն ու հարազատությունը: Բանաստեղծը չի ուզում հեռանալ Անիից. «Ինչպե՞ս հեռանաս քո հին հազարամյա տնից և գնաս նորից օտարություն... Դու այստեղ դու ես և, վերջապես, այստեղ դու դարձել ես դեպի քեզ, ինքդ քեզ ես եկել... հորս տանն ես, դարերով հորս տանը, թվում է, որ միշտ այստեղ եմ.. այստեղ եմ ծնվել, այստեղ եմ հասակ առել և հավիտյան այստեղ եմ լինելու... Երբ մարդ Անին տեսնում է, վերանում է..» (Իսահակյան 2021: 785-786, 944): Իսահակյանի խոսքերով, դեռևս 10 տարեկանից Անիի ավերակներին նայում էր անհագորեն, հպարտանում նախահայրերով, վշտանում կորստի համար և այդ հասակից, ինչպես գրում է արդեն հասուն Իսահակյանը. «ողբեր էի գրում, մանավանդ Անիի մա-

սին, որին գրեթե ամեն տարի այցելում էի և չէի հագնում» (Իսահակ-
յան, 2021: 890): Եվ բնական է, որ գյումրեցի Իսահակյանի պատկա-
րությունը Սոֆիկի հետ տեղի ունեցավ իր ամենասիրելի քաղաքի՝
Անիի Աստվածամոր տաճարում (Իսահակյան Ա., 2020: 431):

Վարպետը շատերին է ուղեկցել Անի, այդ թվում՝ իր մեծ բարե-
կամ ու ընկեր Հովհ. Թումանյանին (1901), նրա զավակներին, Վ.
Տերյանին (1905): Նրանց հետ միասին եղել է Մայր տաճարում, Սմ-
բատաշեն պարիսպների ավերակներում, Հռոմոսի նշանավոր վան-
քում: Իսահակյանը բազմիցս է եղել Անիի Գրիգոր Լուսավորիչ (Տիգ-
րան Հոնեցի), Աբուղամրենց Ս. Գրիգոր, Փրկչի եկեղեցիներում, Կու-
սանաց վանքում, Տիգրան Հոնեցի այր-դամբարանի սրահներում:
Հովհ. Կոստանյանը նկարել է Թումանյանին և Իսահակյանին Աշոտ
Ողորմածի շիրմաքարի առջև: Այդ լուսանկարն այսօր պատմական
արժեք ունի. շիրմաքարը չի պահպանվել, և երկու մեծերի լուսանկարը
դարձել է թե՛ նրանց կյանքի, թե՛ հայոց արքաների հուշ-վավերագի-
րը: Իսահակյանը Անիի այցելուների տպավորության մատյանում գրել
է. «Եվ թո՛ղ Անին լինի անշեջ հուր հայության սրտում՝ վառելու և բոր-
բոքելու ազատության սերը և լինի մեր վերածնության սփինքսը: Թո՛ղ
այրվի, վառվի հայության սիրտը, իսկ ինչ որ այրվում է, նա լույս
ունի...» (Իսահակյան, 2021: 941)

«Ուստա Կարո» վեպում Իսահակյանն առաջադրում է մի գա-
ղափար, ըստ որի՝ Անիի երբեմնի հզորացումն ու հայկական թագա-
վորության վերականգնումը բխում է տեղի նույնիսկ ոչ քրիստոնյա
ազգերի շահերից: Շրջիկ Կայծակի համոզմամբ, օտարազգի Չավուշը
«հայից լավ է. դաշնակցական հոգի ունի», իսկ Ուստայի խոսքերով
«Չավուշս ամենալավ հայն է... ի՞նչ ազգասեր հոգի ունի» (Իսահակ-
յան, 2022: 46, 116): Չավուշը ցանկանում է Անին շենացնել, այսինքն՝
նորոգել հայի թագավորությունը. «– Չավու՛շ ջան, թե որ Անին նորեն
նոր շենցնեն, ի՞նչ կուտաս... լավ, լավ շենցնեն, շինեն, լավ նորովի ու
հայու թագավորն էլ նստի էնտեղ, ի՞նչ կուտաս... Չավուշս թե՛ մեկ մի-
լիոն մանեթ կուտամ, Չե՛, Չավուշ, ջան ասի, թե որ լավ, լավ շենց-
նեն, պայծառ, նորվի ու հայի թագավորն էլ մեջը նստի, ի՞նչ կուտաս:
Չավուշը թե՛ Ուստա ջան, ի՞նչ կուզես որ տամ: Ես էլ՝ հինգ միլիոն
կուտա՛մ: Կուտամ Ուստա ջան, կուտամ, ասավ... էդպես հայ ո՞րտե-

դից կգտնեք» (Իսահակյան, 2022: 117): Եթե նկատի ունենանք Իսահակյանի ազգ - հայերնիք եզրույթների բանաձևը, ըստ որի՝ «Հայրենիքը մարմին է, ազգը հոգի» (Իսահակյան, 2021: 944), ապա Անին Վարպետի համար և՛ մեկի և՛ մյուսի խորհրդանիշն էր: Հայը կորցրել էր Անին՝ որպես հայերնիք - բնակավայր, բայց մնացել էր հոգին, այսինքն՝ ազգը, որը կարող էր վերակենդանացնել մարմինը, մինչդեռ առանց հոգու՝ հայրենիքը կմախք էր, դիակ, ինչպես Բաբելոնն ու Նինվեն, որոնք մնացել էին առանց հոգու: Հենց այս համատեքստում է **Անին դառնում հայության վերածնության խորհրդանիշ**, որտեղ ազգը, դարեր ու դարեր ապրելով շքեղ ավերակների մեջ, մարմինը կենդանացնելու, վերածնելու առաքելություն ունի:

Անիի մասին՝ հողվածներում, ելույթներում, հուշերում և նամականիում

Խորհրդային տարիներին չէին խրախուսվում Անիի մասին պատմական ակնարկներն ու հիշատակությունները: Սակայն դա չէր խոչընդոտում Իսահակյանին: Նա 1941 թ. մայիսին Մոսկվայում կայացած հայ գրականության տասնօրյակի (մայիսի 10 - 20) առիթով իր ելույթում խոսում է «Հրաշակերտ Անիի» մասին և ընդգծում. «**Պատմությունն ազդում է ժողովուրդների երջանկության վրա**» (Իսահակյան, 2020: 369): Իսահակյանին հետաքրքրում էին յուրաքանչյուր գիտական հողված, պեղումներ, գեղարվեստական ստեղծագործություն Անիի մասին: Նա և՛ ուսումնասիրում էր, և՛ արձագանքում գիտական յուրաքանչյուր հետազոտության: Իսահակյանը գրախոսում է Լեոյի «Անի» աշխատությունը, որը թեև գրվել էր 1903 թ. հեղինակի կողմից Անիի ավերակները տեսնելուց հետո, բայց երկար տարիներ՝ մինչև 1963-ը, չէր հրատարակվել: Իսահակյանը ծանոթանում է անտիպ աշխատությանը և իր խոհերը հանձնում է թղթին՝ «Լեոյի «Անին» վերնագրով ճամփորդական նոթերում (Իսահակյան, 2020: 371-37): Վարպետը բարձր է գնահատում իր գրչակից ընկերոջ մի գիրք, որտեղ ճարտարապետական կոթողների նկարագրությունը միահյուսված էր պատմությանը, ավանդույթներին, ավանդություններին ու առասպելներին և «ծայրեիծայր վառվում է մի սրտագրավ հայերնասիրությամբ, անկեղծությամբ» (Իսահակյան, 2020: 371): «Մեր

անցյալի այս պանծալի փառքը՝ Անին,- գրում է Իսահակյանը,- գտել է հանձին Լեոյի, իր ոգևորված երգչին. նրանից լավին մենք չենք պատահել» (Իսահակյան, 2020: 371): Վստահ է, որ «անզուգական» այդ գրքի շնորհիվ **«Ընթերցողի հոգում Անին կկենդանանա և կլցնի արդար հպարտությամբ»** (Իսահակյան, 2020: 372):

Անիի մասին Իսահակյանի և նրա անվանի ժամանակակիցների խոհերն արտահայտվել են նաև բանաստեղծի **հուշերում**: Բոլոր այն նշանավոր հայերը, որոնք Իսահակյանի ուղեկցությամբ են եղել Բագրատունիների վերջին մայրաքաղաքում, արտահայտել են իրենց հիացմունքը բանաստեղծին: Նաև Իսահակյանի շնորհիվ են մեզ հասել մեր մեծերի խոհերն Անիի մասին, որոնք նույնպես չափազանց արժեքավոր են: Վարպետի հուշերում կենդանանում են հայոց մեծերի գրույցները Անիի մասին: Նկատի ունենալով Թորոս Թորամանյանին՝ Իսահակյանը գրում է. «Անին նրա համար ապրող, շնչող իրականություն էր: Անիի անցյալը նրա աչքերում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները: Լսում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը» (Իսահակյան, 2020: 29): Ճարտարապետի տպավորությանը Իսահակյանը հավելում է իր մտորումները. **«Անին ինքնին տրամադրություն է... Անին հայկական մշակույթի հայելին է... նա մեր ոճի ոգին է** (Իսահակյան, 2020: 30, 32):

Անին՝ որպես պատմական հայրենիքի խորհրդանիշ, առկա է նաև Իսահակյանի **նամականիում**: Բոլշևիկյան իշխանության առաջին շրջանում, երբ հայրենիքի մի մասը նվիրաբերվեց Թուրքիային, 1924 թ. փետրվարի 21-ին Իսահակյանը գրում է Վ. Ահարոնյանին. «Ով որ Անին ու Կարսն ու Նախճվանը ինձ կուտա, նա իմ աչքի լույսն է. – եթե ցարը տա, ես մոնարխիստ եմ» (Իսահակյան, 2021: 15):

Էջմիածինը՝ որպես ազգային ինքնության խորհրդանիշ

Իսահակյանը ազգային ինքնությունը կապում է ազգի հավատքի, հոգևոր խորության հետ: Նա քաջ գիտակցում էր, որ Էջմիածինը՝ Մայր աթոռը, ավելի հոգևոր կենտրոն է, քան կրոնական: Բանաստեղծը հանձին էջմիածնի տեսնում էր և՛ քրիստոնեական, և՛ հազարամյակներով կերտված հայ հոգևոր արժեքների պահպանման սրբավայր, որն ուղիղ ճանապարհներից էր «հոգու սովին» դիմակա-

յելու համար, Էջմիածնում էր «ճոխ սեղանի» շուրջ քաղցած չմնալու բանալին: Էջմիածինն էր հակադրվելու «Նյութի տաճարում արբած պարողներին», «Ոգու վառ զեղմունք «միտք ու երազանք» ծաղրողներին ու արհամարհողներին:

Էջմիածնում է հայի պատմական հիշողությունը, ազգի շարունակականությունը: Բանաստեղծը ցույց է տալիս որ ազգային խորհրդանիշները չեն պարտադրվում, այլ բխում են ազգի հոգևոր – մշակութային էությունից ու պատմական ճակատագրից: Էջմիածինը խորհրդանիշ էր դարձել ի սկզբանե, որպես քիստոնեական առաջին տաճար, որն իր հայրենիքում հայն էր կառուցել: Դրանով Էջմիածինը դարձել էր Քրիստոսի հայկական ծննդավայր՝ «Հայկական Բեթղեհեմ»: Այդպիսի արժեհամակարգի վրա ստեղծված խորհրդանիշը՝ անկախ տարբեր ժամանակներում նրա դեմ ոտնձգություններից, միշտ կենսունակ է: Խորհրդային շրջանում Իսահակյանը համարձակություն ունեցավ ըստ պատշաճի արժևորելու Սուրբ Էջմիածինը և միշտ նրա կողքին լինելու: Բանաստեղծի թողը՝ Ավիկ Իսահակյանը, վկայում է, որ Վարպետը հաճախ էր Մ. Սարյանի հետ այցելում Էջմիածին՝ նախ Գևորգ Զ (6-րդ) ապա Վազգեն Առաջին կաթողիկոսներին: «Իսահակյանն էլ, Սարյանն էլ Սուրբ Էջմիածնի հոգևոր խորհրդի անդամներ էին, – գրում է գրականագետը, – և երկուսն էլ բերել էին իրենց մասնակցությունը Վազգեն Ա-ին կաթողիկոս օծելու արարողությանը... Վեհափառին Իսահակյանը սիրում էր հայրական սիրով» (Իսահակյան Ա., 2020: 429):

«Հիշատակարան»-ում Իսահակյանը խորհում է հայ ժողովրդի հավատի, եկեղեցու և հոգևոր արժեքների մասին, հայ ազգի հոգևոր հավատքի օրրան հռչակում է Էջմիածինը: Բանաստեղծը առաջադրում է ժողովրդի «անպարտելի ոգի» լինելու դրույթը: Այս մոտիվը համահունչ է օրինակ՝ «Ես քեզ հավատում եմ, Տե՛ր» վերլիբրին, որտեղ արտացոլվում է հավատի և հույսի դերը մարդու և ազգի կյանքում: Էջմիածնում Իսահակյանը տեսնում է իր ազգի դիմակայության ոգին, միաժամանակ խոսում է հայերի ցրվածության և օտար միջավայրում նրանց ինքնության կորստի վտանգի մասին: «Ուստա Կարո» վեպում Վարպետը հայ ազգին համեմատում է ծառի հետ, որի արմատներն ու գոյության պայքարը գնում են դարերի խորք, իսկ դրանց

հիմքում էջմիածինն է՝ որպես հայի հոգևորության և ազգային գիտակցության դրսևորում:

1944 թ. Իսահակյանը գրում է «Էջմիածնի պատմական դերը» խորագրով նամակն՝ ուղղված հայրապետին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր դասին: Նա Էջմիածինը ներկայացնում է որպես հայ ժողովրդի պատմության անբաժան մաս, որպես եկեղեցիների մայր, հայրապետական աթոռ, ազգային գոյության խարիսխ, ընդգծում է Գևորգյան ճեմարանի վիթխարի դերը ազգի լուսավորության, մատենադարանի ստեղծման, 1000-ից ավելի ձեռագրերի պահպանման գործում (Իսահակյան, 2021: 235-240): Վարպետի խոսքը հնչում էր առավել հավաստի, քանի որ երեք տարի ուսանել էր գիտության այդ դարբնոցում և աշակերտել Լ. Լիսիցյանին, Լ. Մանվելյանին, Հ. Հովհաննիսյանին:

Կյանքի վերջին տարում՝ 1957 թ. հունիսի 23-ին, Մայր աթոռի 1654-ամյա հոբելյանի առթիվ Իսահակյանն իր ելույթում տվել է Էջմիածնի մասին իր բանաձևը՝ հստակ ու կատեգորիկ՝ ասելով. «Հայ ժողովուրդը, ինչպես երգում էին հնում, իմ մանկության ժամանակ հաշվվում էր որպես Էջմիածնա ազգ: *Էջմիածնա ազգ...* Շատ խորունկ խորհուրդ կա դրա մեջ: Իհարկե, *առանց հայ ժողովրդի Էջմիածին չկա, առանց Էջմիածնի՝ հայ ժողովուրդ չկա*» (Իսահակյան, 2021: 362): Նա Էջմիածինը տեսնում էր ոչ միայն որպես ազգային գոյության պահպան հոգևոր կենտրոն, այլև որպես սրբություն, որի շուրջ ողջ ժողովուրդը հավաքվել է պատմության օրհասական պահերին: Ըստ բանաստեղծի՝ Էջմիածինը ազգային ինքնագիտակցություն է, ոչ միայն կրոն: Հետևաբար թշնամին միշտ փորձել և փորձելու է ոչնչացնել այն. Իսահակյանը գրում է. «Երբ այսօր փորձում են բաժանել մեզ այդ սրբությունից, մենք պարտավոր ենք հիշել՝ *«Այնքան ժամանակ որ հայ ժողովուրդը կա, Էջմիածինը կա: Այնքան ժամանակ որ Էջմիածինը կա, հայ ժողովուրդը կա...* հայ պետականության կորցրած օրվանից... *հայ պետության գործ է կատարել... Սա նոր խոսք չէ, սա հին խոսք է: Էջմիածինը հոգևոր պետություն է կազմել. և՛ մոնղոլները, և՛ թուրքերը, որ ամեն բան կործանել են, ավերել են, եկել են Էջմիածնա պարսպի առաջ կանգ են առել»* (Իսահակյան, 2021: 362): Էջմիածնի ուժն ու զորությունն ընդունել են բոլոր իշխողները, այդ

թվում՝ իսլամական թշնամի պետությունները. սուլթաններն ու շահերը բանակցում էին Ամենայն հայոց հայրապետի հետ: Պարսից Նադիր շահի թույլտվությամբ է վերականգնվում Մայր աթոռի կալվածատիրական իրավունքները և գերությունից ազատվում են բազմաթիվ հայեր: Հայոց եկեղեցին բոլոր ժամանակներում միշտ նպաստել է ազգային ազատագրական պայքարին, Սյունյաց իշխաններին՝ Դավիթ բեկին, մեր հայդուկներին, Անդրանիկին և այլն: Էջմիածինը բնորոշելով որպես հայության սիրտը՝ Իսահակյանը գրում է. *«Ես սիրում եմ Էջմիածինը և պաշտել եմ Էջմիածինը, և քանի որջ եմ, նույնը իմ հոգու մեջ պիտի կատարվի... ամեն մի հայի սրտի մեջ են Էջմիածնա սյուները... Ժողովուրդ, որն ասվում է «Էջմիածնա ազգ», մենք էլ՝ այդ ազգի որդիները, միշտ էլ պիտի կապված լինենք այդ ազգի հետ և պահենք ու պահպանենք նրան, որովհետև մեր ազգության գոյությունը ամենաուժեղ կերպով, կայուն և տևական կերպով, նա է պաշտպանել...»* (Իսահակյան, 2021: 362-363):

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանի գրական ողջ ժառանգությունը խորապես արտացոլում է ազգային ինքնության հիմնահարցը՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրի, օտար ազդեցությունների դեմ հոգևոր դիմակայության խնդիրների արժարժման համատեքստում: «Ուստա Կարո» վեպում, «Իմ կարավանը», «Հայդուկի երգեր», «Հիշատակարան» երկերում բանաստեղծը միավորում է անհատի և ազգի ճակատագրերը՝ ցույց տալով ազգային ինքնության և նրա խորհրդանիշների խորքային կապը մարդկային արժեքների հետ: Հայրենի բնաշխարհը և մշակույթը՝ Արարատը, Անին, Էջմիածինը, Արագածը, Արաքսը, Ախուրյան գետը և այլ խորհրդանիշներ արտահայտում են ազգային ինքնության արմատները:

Ավ. Իսահակյանի անձնական և ազգային փորձառությունները միահյուսվում են՝ արժարժեղով և վերափմաստավորելով հայ ժողովրդի գոյապայքարի և հավերժության խորհրդանիշները: Այս իմաստով Իսահակյանի ստեղծագործությունը այսօր էլ ոչ միայն գրական, այլև հայ ազգի հոգևոր ողջ ժառանգության աներկբա արժեք է:

Իսահակյանի երկերում Արարատը, Անին ու Էջմիածինը, ինչպես և մայրենի լեզուն՝ որպես ազգային ինքնության բաղադրիչներ, հայ ազգի հավերժության և կենսունակության նաև վրեժի, պայքարի ու պահանջատիրության խորհրդանիշներն են: Վարպետը վստահ էր, որ հայոց սարի, եկեղեցու, պետականության խորհրդանիշ քաղաքի նկատմամբ խոնարհումի փոխարեն անտարբերությունը կարող է ինքության ճգնաժամ առաջացնել նույնքան՝ որքան ոգու սովը՝ ճոխ սեղանի շուրջ:

Ազգային ինքնության խնդիրների իսահակյանական ընկալումը արդիական է: Նրա մտորումները լեզվի, մշակույթի և հոգևոր արժեքների ու խորհրդանիշների պահպանման մասին այսօր էլ նպաստում են հայ մշակույթի և ինքնության պահպանման ջանքերին և արձագանքում են հայ ազգի առջև կանգնած արդի մարտահրավերներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աթայան Էդ.**, Հոգի և ազատություն, Հոգվածներ և թարգմանություններ, Ե., «Սարգիս Իսաչենց» հրատ., 2005. 619 էջ:
2. **Եղիազարյան Ա.**, 20-րդ դարի հայ գրականություն: Դեմքեր և խնդիրներ, Երևան., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 320 էջ:
3. **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ տասը հատորով, հ. 8, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 1999, 709 էջ:
4. **Թումանյան Նվ.**, Հուշեր և զրույցներ, Ե., «Էդիթ-Պրինտ» հրատ., 2009, 336 էջ:
5. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը» // ՊԲՀ 1977, թիվ 2, էջ 99-104:
6. **Իսահակյան Ավ.**, Իմ կարավանը, Ե., «Վարպետ» հրատ, 2006, 48 էջ:
7. **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, Ե., հրատ., 1977, 474 էջ:
8. **Իսահակյան Ավ.**, ԵԼԺ 14 հատորով, հ. 8, Ոստա Կարո և Օրթե Հարութ (երկրորդ տարբերակ), գիրք Ա, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, 950 էջ:
9. **Իսահակյան (ա) Ավ.**, ԵԼԺ 14 հատորով, հ. 12, Հոգվածներ, ելույթներ, աֆորիզմներ, Ե., 2021, «Էդիթ Պրինտ», 984 էջ:
10. **Իսահակյան (բ) Ավ.**, ԵԼԺ 14 հատորով, հ. 14, Նամակներ (1924-1957), Ե., 2021, «Էդիթ Պրինտ» հրատ., 1136 էջ:

11. **Խսահակյան Ա.**, Ավետիք Խսահակյան. գիտական կենսագրություն, հ. 1, Ե., ՀՀ. ԳԱԱ «Գիտություն». հրատ., 2000, 601 էջ:
12. **Խսահակյան Ա.** Մ. Սարյան. դիմանկար՝ արված հուշերի գույնով // «Հուշեր Մարտիրոս Սարյանի մասին», Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2020, էջ 422-449, 520 էջ:
13. **Խաչատրյան Ա.**, Ավետիք Խսահակյանի «Մասսա Մանուկ» վիպերգը, // Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2001, թիվ 1, էջ 104-116:
14. **Հարությունյան Էդ.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Ե., Մակմիլան-Արմենիա, 2004, 152 էջ:
15. **Հարությունյան Էդ.**, Ազգային ինքնություն. «սերունդների աշխարհ» և «ժամանակակիցների աշխարհ» // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2019 № 2 (29) էջ 3-15:
16. **Հարությունյան Էդ.**, Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 1 (115), Ե., 2005թ., էջ 3-13:
17. **Հովհաննես Թումանյան** 1869-1923, պատկերազարդ ալբոմ, Ե., 2014, ԹԹ հրատ., 479 էջ:
18. **Պետրոսյան Դ.**, Անհատի ինքնության նոր որակները վիրտուալ իրականության մեջ («Ֆեյսբուքի» հայ օգտատերերի օրինակով) // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2022, թիվ 1 (37), էջ 76-8:
19. **Սարյան Ա.**, Մարդ քաղաքացուց բերված նկարիչը // Հուշեր Մարտիրոս Սարյանի մասին, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2020, 402-408 էջ, 520 էջ:
20. **Лурье С.** Метаморфозы традиционного сознания. СПб., Тип. им. Котлякова, 1994., 288 с.
21. **Лэйнг Р.Д.**, Я и другие, Перевод с англ. Е. Загородной. М.: Независимая фирма “Класс”, 2002, 192 с.
22. **Рикер П. Я** – Сам как другой. М., Изд. гуманитарной литературы (Французская философия XX века) , 416 с.
23. **Хантингтон С.** Кто мы? Вызовы американской национальной идентичности. М.: Изд. АСТ, 2018, 645 с.
24. **Хесле В.**, Травма и трагедия // "Вопросы философии", 1994, № 10, с 5:

Համացանցային հղումներ

25. **Բարխուդարյան Հ.**, Արարատ նկարող ազգ // <https://evnmag.com/articles/ararat-nkarox-azg.html> (մուտք 26.06.2025):
26. **Տիոյան Ս., Աբազյան Ս.** Հովհաննես Թումանյանի պատվանդանները // <https://language.sci.am/hy/news/hovhannes-towmanyani-patvanow-nnere.html> (մուտք 19/02/2021)

REFERENCES

1. **Atayan, Ed.** Soul and Freedom: Articles and Translations. Y.: Sargis Khachents, 2005, 619 p.
2. **Yeghiazaryan, A.K.** Armenian Literature of the 20th Century: Figures and Issues. Y.: Science Publishing House, NAS RA, 2002, 320 p.
3. **Tumanyan, Hovh.** Collected Works in Ten Volumes, Vol. 8. Y.: Science Publishing House, NAS RA, 1999, 709 p.
4. **Tumanyan, Nv.** Memoirs and Conversations. Y.: Edit Print Publishing, 2009, 336p.
5. **Inchikyan, A.A.** Avetik Isahakyan's "Memoirs". In: PBH, 1977, No. 2, pp. 99–104.
6. **Isahakyan, Av.S.** My Caravan. Y.: Varpet Publishing, 2006, 48 p.
7. **Isahakyan, Av.S.** Memoirs. Y.: Publishing House, 1977, 474 p.
8. **Isahakyan, Av.S.** Collected Works in 14 Volumes, Vol. 8, Usta Karo and Orthe Harut (Second Version), Book A. Y.: Edit Print Publishing, 2022, 950 p.
9. **Isahakyan, Av.S.** Collected Works in 14 Volumes, Vol. 12, Articles, Speeches, Aphorisms. Y.: Edit Print Publishing, 2021, 984 p.
10. **Isahakyan, Av.S.** Collected Works in 14 Volumes, Vol. 14, Letters (1924–1957). Y.: Edit Print Publishing, 2021, 1136 p.
11. **Isahakyan, Av.V.** Avetik Isahakyan: Scientific Biography, Vol. 1. Y.: Science Publishing House, NAS RA, 2000, 601 p.
12. **Isahakyan, Av.V.** M. Saryan: Portrait Painted with the Colors of Memories. In: Memoirs about Martiros Saryan. Y.: Edit Print Publishing, 2020, pp. 422–449, 520 p.
13. **Khachatryan, A.Kh.** Avetik Isahakyan's Epic Poem "Massa Manuk". In: Herald of Social Sciences. Y., 2001, No. 1, pp. 104–116.
14. **Harutyunyan, Ed.** National Identity and Life Culture. Y.: Macmillan-Armenia, 2004, 152 p.

15. **Harutyunyan, Ed.** National Identity: “World of Generations” and “World of Contemporaries”. In: Bulletin of Yerevan University: Philosophy, Psychology, 2019, No. 2 (29), pp. 3–15.
16. **Harutyunyan, Ed.A.** Armenian Continuity: The Issue of Functional Reliability. In: Bulletin of Yerevan University, 1 (115), Y., 2005, pp. 3–13.
17. **Hovhannes Tumanyan 1869–1923:** Illustrated Album. Y.: TTH Publishing, 2014, 479 p.
18. **Petrosyan, D.V.V.** New Qualities of Individual Identity in Virtual. In: Bulletin of Yerevan University: Philology, 2022, No. 1 (37), pp. 76–80.
19. **Saryan A.,** The Artist Brought from the Citizen. In: Memoirs about Martiros Saryan. Y.: Edit Print Publishing, 2020, pp. 402–408, 520 p.
20. **Lurie, S.** Metamorphoses of Traditional Consciousness. St. Petersburg: Kotlyakov Printing House, 1994, 288 p.
21. **Laing, R.D.** The Self and Others. Translated from English by E. Zagorodnaya. Moscow: Independent Firm “Class,” 2002, 192 p.
22. **Ricoeur, P.** The Self as Another. Moscow: Humanitarian Literature Publishing (French Philosophy of the 20th Century), 416 p.
23. **Huntington, S.** Who Are We? Challenges to American National Identity. M.: AST Publishing, 2018, 645 p.
24. **Hesle, V.** Trauma and Tragedy. In: Voprosy Filosofii, 1994, No. 10, p. 5.
25. **Barkhudaryan, H.** The Nation Painting Ararat. Available at: <https://evnmag.com/articles/ararat-nkarox-azg.html> (accessed 26.06.2025).
26. **Tioyan, S., Abazyan, S.** Hovhannes Tumanyan's Titles. Available at: <https://language.sci.am/hy/news/hovhannes-towmanyani-patvanownnere.html> (accessed 9.02.2021).